


3042

Mungufu u. P.
Sukul. #.

612



phochu
1893

889-3
Q-18

Է Ա Ր Ե

Վ Հ Պ

ՅՈՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐ Ը. Թ. ԽԵՆԳԵՐԻ

Գևրու. թարգմանեց

ՅՈՎՀ. ԼԵԼՈՅՆԵՑ

(Արտադրած „Արձագանք“ շաբաթ. 1884
№ № 41, 15, 16 և 17.)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձե, Կիկ. փ. տ. 21.
Տիպոգրաֆія М. Шарадзе, Ник. 21
1893

7011

2003

889-3
m-18 Կ/1

(22)

Է Ա Ր Ե


Վ Հ Պ

ՅԱՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐ Ը. Թ. ԽԱՆԴԱԲԵՒ-Ի

5895
5895

Զերության
օպազ կալիս

(Արտադասական „Արձագանք“ շաբաթ. 1884 Ն 14,
15, 16 և 17.)



Թ. Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ա. Շարադէ, Կիկ փ. առ. 21
Տիպոգր. Մ. Շարադզե, Նիկոլ. 21
1893

Дозв. цензурою, Тифлисъ, 15-го Марта 1893 г.

ԵՄԱԷ

Վ. Հ. Պ

ՅՈՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐ Ա. Պ. ԹԲԵԴՐԵՍԻ-Ի

Ա.

1842 թուին էր: Օտարի լուծը թօթափելու նախանձախնդիր, նոր Զէլանգիալի Հուարկի և Հուկի-Անգա երկու ցեղերը ապստամքել էին Անգղիայոց տիրապետութեան դէմ: Նոքա բարկութեան և մահու աստուծոյ Տեղօկօի անուամբ երդուել էին օտարազգի ըլոնակալներին իրենց կղզուց դուրս վանել և քաջընթաց հասել էին մինչև Տերանիկի և աւելի հեռու մինչև Նոր-Պլիմութ, ճանապարհին գիւղեր ու գաղթականութիւններ կողոպտելով ու ալբելով:

Անգղիացիք գիմադրեցին նրանց ի փախուստ դարձրին և ի թիւս բազմաց գերի առին նոցա ցեղապետներից մին, ծերունի Խուրակէին (արագոտն), որին նոքա զինքը իբրև հայր սիրող և իբրև թագաւոր լարգող ցե-

զակիցների աչքի առաջ անգութ ու անխնայ
կախեցին:

Սակայն ալդ վարմունքով փոխտնակ ա-
նապատի որդւոց մէջ նորանոր փորձերի դէմ
երկիւղ ներշնչելու, վերջին ծայր կատաղու-
թեան հասցրին նրանց և նոյա մէջ մի ան-
շեց ատելութիւն բորբոքեցին: Երկու տԱլ ցե-
ղեր, Հանկի և Բէյկատօ, միացան առաջիննե-
րի հետ և Անգղիացի պաշտօնեալք, որք չէին
կարող գործին թեթև նալել, ստիպուեցան
զօրաւոր միջոցների ձեռք զարկել վալրենինե-
րի անընդհատ յարձակմանց միանգամայն վերջ
տալու համար:

Սյդ առթիւ նոր. Պլիմութում մի արշա-
ւանք պատրաստուեցաւ. որոց նպատակն էր
ապստամբութիւնը հիմնովին խեղդել: Բոլոր
պատրաստի զինուորական ոլժերը, հետեւակ, թէ
ոմբածիգ գնդեր զէնքի կանչուեցան, բացի
ալդ նոյն տեղի նաւալհանգստում գտանուող
«Ամֆիտրիո» նաւի պահապան զինուորները
օգնութեան առնուեցան:

Վաշտերի առաջ խաղալու նախընթաց
երեկոյին, գնտերի հրամանատար սպաները ընտ-
րելագոյն քաղաքացիների հետ ի միասին խըմ-
բուած էին կուսակալի, գնդապետ Կվինտեր-
բելի մօտ: Բնականաբար խօսակցութեան գլո-

խաւոր նիւթը յառաջիկայ պատերազմն էր, ո-
րոյ լաջող ելքը կզզու կատարեալ նուաճումն
էր խոստանում:

Դահնձի մէջ տեղը, բոլորակ սեղանի մօս,
նստած էր օրիորդ Ելիզարէժի Կվինտերբել, և
թէ էր ածում: Նոյն խոկ Արատենդի շըջան-
ներում կարող էր նա իւր ձիւնի պէս սպիտակ
մորթով ու կապոյտ աչքերով իւրեւ գեղեցկու-
հի աչքի զարնուել, որքան աւելի նոր Զե-
լանդիայի անապատներում, ուր նա փթթում
էր իւրեւ մէկ հատիկ ծաղկիը իւր սեռի: Բա-
ցի այդ օրիորդ Կվինտերբելը ժառանգուհի էր
բաւական նշանաւոր հարստութեան գնտապե-
տի, որոյ մասին գիտէին, որ պատերազմական
պաշտօնապետի առանձին շնորհն է վայե-
լում:

Այդ ամեն պարագալքը ի նկատի առնե-
լով, ընական է, որ օրիորդ Ելիզարէժը մի
փափագելի հարսնացու էր բոլոր այն երիտա-
սարդ սպաների համար, որք նորա գեղեցկու-
թեանն էին զմալում, նորա հարստութեանց
ձգտում և հօրը համաձայնութեանը կարօ-
տում: Այդ պատճառաւ և դատարկ չէր այն
սեղանը, ուր նախագահում էր օրիորդը, և
ցամաքալին թէ ծովալին սպաների խմբեր մե-
ջուների նման խռնում էին նորա շուրջը.

ամենն էլ գեղեցիկ թէյաբաշխին դուք գալու
մրցելով:

Դոցանից մինը կար, որ կարծես իւր ջան-
քերին բաղդաւոր ելք էր տեսնում: «Իա ծո-
վագնոտի մի երիտասարդ սպալ էր, որի առա-
ւելութիւնը իւր ախոյեաններից հետեւալն
էին: Նախ՝ դէմքի գծագրութիւնը արտաքոյ
կարգի կոնոնաւորութիւն ունէր և լիշեցնում
էր Անտինօլիսի պատկերը, եթէ միմիայն աչ-
քերի մէջ չլինէր մի տեսակ անպարկեշտու-
թեան հասնող յանդգնութիւն և իւր վայե-
լուչ շրթունքը ծածկուած չլինէին դեռահաս
ընչուցքով, որ ինքը մի առանձին հպարտու-
թեամբ շուտ շուտ ոլորում էու: Երկրորդ՝ ոչ
ոք նորա պէս չէր պարում վալս և պօլիս
պարերը, որք այդ ժամանակ նոր ընդունուած
էին և երբորդ՝ նա ունէր մի գեղեցիկ բարի-
տօն ձայն, և հինգ օր շարունակ, մինչդեռ
«Ամֆիտրիտ» շոգենաւը Պլիմութի առաջ խա-
րիսի ձգած կանգնած էր, երգում էր օրիորդ
Կիմանտերրիլի հետ «Լուկիա» օպերաից: Զոր-
րորդ՝ և շատերը հաստատում են թէ այդ
էր երիտասարդ սպալի գլխաւոր ձգողական ոյ-
ժը—նորա անունն էր լորդ Ալբերտ Բօբլէ,
Մարքիզ Ֆիլիպի երիտասարդ որդին, ու-
րեմն մի երիտասարդ, որ իւր կնօշ թէւ մեծ

հարստութիւն չունէր տալու, բայց դորա փո-
խարէն մի բարձր ազնուատոհմ անուն:

Այդ երիտասարդի ակնածութիւնքը կար-
ծես գրաւեցին գնդապետի աղջկան, որ իւր
հաճութիւնը իւր սիրալիր ընդունելութեամբ
էր արտայալտում:

«Ի՞նչ կը հրամալէք բերել ձեզ մեր ար-
շաւանքից, օրիորդ Ելիզաբեթ», հարցրեց լորդ
Ալբերտ ժամանով ու թէլը ճաշակելով: Այն
ճերմակ ծովը, որ հօռուից կաթնապուրի է
նմանում, չեմ կարող գմբաղդաբար, ձեր ոտ-
քի տակ դնել, և ոչ իսկ Տօգադօնի ժայռերը,
բայց եթէ կը փափագիք, քանի մի Մօկոմօ-
կացիներ, կամ աղ գրած գլուխներ քանի մի
ունդատիրաների, որպէս կոչվում են այստեղ
վայրենիների առաջնորդները, կարող եմ ձեզ
խոստանալ»:

«Աստուած մի արասցէ, այդ ի՞նչ առա-
ջարկութիւն է, լորդ Ալբերտ», պատասխանեց
օրիորդ Կիմանտերրիլ յանդիմանող ձայնով: «Ձեր
ամենից, տեարք եմ, այս եմ ցանկանում, որ
դուք ինքնիդ ողջ առողջ յետ գառնաք», ա-
ւելցրեց նա, խօսքերը ամենքին, իսկ աչքե-
րը երիտասարդ սպալին ուղղած:

«Ա՞լ, այդ մասին անհոգ եղէք», ասաց
փքուն ձայնով Ալբերտը, որ առաջին անդամ

պիտի պատերազմ ելնէր Պօլիմելիսայում: «Դուք հօ չը պիտի կարծէք, որ այն թշուառական-ները որ Հագուստի տեղ փսխաթներ ունին վերսն և զէնքի տեղ ձկան փուշ, պիտի հա-մարձակին «Ամֆիտրիսի» ոմբակոծութեան տակ այնքան մօտենալ որ մեզ վնաս հասց-նեն: Բայց և այնպէս, քանի որ դուք նոցա գլուխները արհամարհում էք—և իրաւունք ունիք, վասն զի գորանից աւելի անճոռնի ըն-ծայ կարելի չէք անել—ուստի խոստանում եմ ձեզ վայրենի իշխանուհեաց մի ամբողջ երա-մակ շղթայակապ, որոնցից գուք ձեզ նաժիշտ-ներ կարող էք ընտրել, և որոց գուք նստե-լիս իբրև պատուանդան, արշաւելիս իբրև գրաստ կարող էք գործ ածել»:

«Զեր երևակայութիւնը բոլորովին ա-սիական է, միլորդ», ասաց օրինորդ Ելիզաբէթ, «զրաւ կը դամ, որ գուք Թոմաս Մուրի «Լա-լա Ռուքը» նոր էք կարդացել»:

«Ես ձեզ խորհուրդ կը տամ, ազնիւ բա-րեկամ», ասաց նորին գերապատութիւն Դա-նիէլ Ուխնգվել, որ մի քանի օր առաջ Նոր-Պլիմութի առաքելութիւնից վերադաշտ էր, «Ես ձեզ խորհուրդ կը տամ այդ տեսակ պար-տականութիւն չը ստանձնել: Դուք ծանօթ-

չէք բնիկների յանդգնութեան ու քաջու-թեան»:

«Այդ մասին դառնալիս կը խօսենք», վրայ բերաւ լորդ Ալբերտը հպարտութեամբ: «Ես մինչև անգամ յօժարութեամբ յանձն եմ առ-նում ձերդ գերապատութեան նոցա զօրա-պետներից երկուսին բերել, որոց գուք իբրև ժամակոչներ ձեր եկեղեցում գործածել կա-րող էք»:

«Միլորդ», պատասխանեց քահանան լուրջ գէմքով, «Եթէ այդ մարդիկը մեր գաղթակա-նութեան վերայ յարձակին, մենք անշուշտ պի-տի լետ մղենք և աշխատենք անվնաս անել նրանց: Սակայն չպիտի մուանանք, որ մենք մեր կրօնի և քաղաքակրթութեան գերազան-ցութեամբ ենք պարծենում: Այդ կրօնը և այդ քաղաքակրթութիւնը միանգամայն խրա-տում են մեզ չը նեղել մեր ոտոխներին, ո-րովհետեւ նոքա մեզնից տկար են, այլ պաշտ-պանել ոչ նրանց հողը, ոչ ստացուածքը և ոչ ազատութիւնը խլել այլ ջանալ բանիւ և գործով նոցա բարքը ուղղել և նոցա մեր Աս-տուածակին վարդապետի ուսման գոները բա-նալ: Մի խօսքով, նոցա ոչ իբրև ոտքի պա-տուանդան և ոչ գրաստ նկատել, այլ իբրև մոլորեալ եղբարք, որոց ճշմարտութեան և

գիտակցութեան ճանապարհը հանել՝ մեր կոչումն է:»

Հանդիսականների մեծագոյն մասը հաւանութիւն ցոյց տուեց երիտասարդ լորդի հըպարտութեանը տուած այս փոքրիկ դասաւութեան, մանաւանդ գնդապետի թիկնապահ հարիւրապետ Թրաշեր, որ վաղ յոյս ուներ օրիորդ Ելիզաբեթի ոիրտը դրաւելու, բայց տեսնում էր, որ իւր աստղը նսեմանում է «Ամփիտրիտի» փալուն սպալի երևալով, քահանալին գոհութեան մի ակնարկ ձգեց:

Սակայն լորդ Ալբերտը այն մարդը չէր, որ խօսքի տակ մնար, այլ և քահանալի խօսքերի հաճոյ ընդունելութիւնը զալրացնում էր նորան:

«Ես ամենեին չեմ զարժանում, գերապատիւ Տէր», ասաց նա աշխուժով, «Երբ լըսում եմ Ձեր բերանից պաշտպանութիւն այդ վալրենիների, ինձ կզարմացնէր դորա հակառակը: Ես գիտեմ, որ դուք միսիօնարներից առանձին սէր վայելելու և տաք տաք պաշտպանուելու բազգն ունիք, այնպէս տաք, որ ձեր անձնական շահերը Անգլիալի շահերից զլուխ կարող են դասուել: Ես լաւ հասկանում եմ, որ անհատների օգտի համար շատ ցանկալի կլինէր եթէ նոր Զելանդիալի իշխանութիւնը

վալրենի Ուանգատէրներին (ցեղապետներին) մնար, նոցա ուզեցածի պէս դարձնելու համար, և Անգլիալի գրօշակը երբէք կանգնելու չէր այս կզզու վերայ: Այսօր իսկ գուցէ կան այնպիսիք, որ գաղտնաբար անլաջողութիւն են ցանկանում մեր զէնքերին»:

«Այդ զըպարտութեանց պատասխունը, միլորդ», ասաց քահանան, «թողեցէք ինձ: Ես այն ժամանակն էլ լուեցի, երբ գիմադրական թերթերը իրանց յօդուածներում նոյն զըրպարտանքը միսիօնարների երեսին դարկին: Կասկած չկայ, որ ես համազգիներիս յաղթուիլը չեմ ցանկանում, որովհետև ես պատերազմին պիտի մասնակցեմ: Ես ինձ պարտք եմ համարում երկու կողմի զոհերի, թէ վալրենիների, թէ քաղաքակիրթների համար Աստուծոյ օգնութիւնը և մարդկալին գուցը ազերսել: Եւ եթէ նոքա մեզ, օտարներիս սիրով և առանց կասկածանաց ընդունել են, մեզ, որ նոցա համար օտար ծէսեր, օտար կըրօն ենք բերել, մենք Քրիստոսի հետեղողներս, որ պարծենում ենք մեր կրթութեամբ, չպէտք է նոցա բարին չարով փոխարինենք և ոչ էլ նրանց վալրենի անուանենք, եթէ չենք ուզում նրանցից էլ աւելի վալրենի երեւալ»:

Այս խօսքերը փոքր ինչ դառնութեամբ

ասելուց յետոյ, անցաւ քահանան դահլճի միւս
կողմը և շուտով թողեց ընկերութիւնը միւս
օրուան չուելու համար պատրաստուելու:

Իսկ լորդ Բօբլէլը բանի տեղ չը դրեց ոչ
այդ բաւականին խիստ յանդիմանութիւնը և
ոչ շրջապատողների տհաճ քրքիջը, որ յարու-
ցեց նորա դէմ Տէր Որինգվելի խօսքերը, որ
ընդհանուր յարգանք էր վայելում: Նա ան-
հոդ շարունակում էր իւր ակնածութիւնքը
առ օրիորդ Կվինտերրիլ, երգում էր նորա հետ
երկձախ տաղեր «Լուկիա»-ից, գրում էր ոտա-
նաւորներ նորա ալբոմում, վերջապէս յաջողե-
ցաւ նորան իւր մտաւոր նրբութեամբ և ան-
հոգութեամբ գուարճութիւնը իրեն քարշել,
միւսներին նոյն իսկ հարիւրապետ Ֆրապերին
հեռացնել, և երեկոյի մնացորդը գրեթէ ամ-
բողջապէս գնդապետի աղջկայ հետ անցկաց-
նել:

Միւս առաւօտ, երբ վաշտերը յառաջ էին
շարժվում, լորդ Բօբլէլը հրաժեշտ էր տալիս
իւր ընկերներից մէկին, որ նաւի խմբից լինե-
լով իւր հետ միասին մասնակից էր գնդապե-
տի երեկոյեան հրաւերքին:

«Պուլրօպ եղբայր», ասաց նա «Ես գնում
եմ, թողնելով քեզ իբրև իմ լիազօր և կամա-
կատար իմ վերջին կարգադրութեանց: Պու-

նկատեցիր, անշուշտ, որ օրիորդ Ելիզաբէթը
ոչինչ թշնամութիւն չունի ինձ դէմ: Եթէ ես
ընտրուած չլինէի այն վալրենի գազանների,
բազմապատռարժան Տէր Որինգվելի սիրելի-
ների գլուխները իսկոյն իրենց տեղը դնել և
եթէ ինձ մի ամսի չափ թողնէին նոր-Պլիմու-
թում մնալ, մի ամսի վերջում Տէր Որինգվել-
լը գուցէ պատիւ կունենար իմ հարսանիքս
նոր-Զելանդիալի և աշխարհիս ամեն ծալրերի
ամենազեղեցիկ և ամենահարուստ օրիորդի
հետ օրհնելու: Բայց ես պիտի զնամ, և ես
մի հարիւրապետ գիտեմ, որ ալստեղ է մը-
նում, և որ, պիտի խոստովանիմ, ինձ շատ կաս-
կածելի է թւում: Այցելիր ուրեմն օրիորդ
Կվինտերրիլին շուտ շուտ, և եթէ յարմար
գտնես ինձնից խլելու, մի գանդապիր: Բայց
եթէ տեսնես, որ յոյս չունիս, այնպէս մի արա,
ինչպէս այն նախանձոտ շունը, որ թէպէտ ին-
քը գարի չէր ուտում, բայց սակայն հաշում
էր սոված ձիու վերայ, որ մօտենում էր կա-
լին, ընդհակառակը օգնիր ինձ, բացակալիս,
պահիր ինձ նորա լիշողութեան մէջ և հոկիր
ամբոցին, որ թշնամին յարձտկմամբ չ'առնի,
և որ գլխաւորն է, հարիւրապետի վերայ
աչքդ բայց պահիր: Մինչև հարստանալդ, քեզ

ընդդէմ չի լինի հարուստ բարեկամ ունենալ:

Բ.

Վայրենիները իրանց բանակը թէմզ գետի ափին էին կանգնել և այնտեղ սպասում էին թշնամու գալուն:

Խուրակիի մահից յետոյ յեղապետ ընտրուած էր նորա որդին Ֆիդիս (կատաղին), որ իւր քաջութեան համար նապուլօն¹⁾ (նապոլէոն) մականունն էր ստացել, որովհետեւ Ֆրանսիացի աշխարհականի հռչակը այս վայրենին անգամ ականջն էր հասել: Ֆիդիսը իւր հօր մահից յետոյ անհաշտ ատելութիւն էր երդուել Անգլիացոց դէմ և նորա վրէժի ծարաւը անյագ էր:

Անգլիացոց առաջին զրոհը կորստաբեր եղաւ վայրենիների համար, որ չգիտենալով «Ամֆիտրիտի» Նոր-Պլիմութ գալը, ոմբաձիդ յարձակման դէմ պատրաստուած չէին, և կանգնած էին դաշտում, ուր նոքա պաշտպանուած

¹⁾ Նոր-Զելանդացին Ֆիդիս, արդարեւ նապուլօն Բոնապարտիս մականունը իւր քաջութեան համար:

էին մի փայտեալ պատնէշով: Առանց մի նէտընկեցի չափ անգամ մօտենալու, Անգլիացիք ոչնչացրին Պան (այսինքն խրամատը) և գորանից յառաջացած շվոթութեան և երկիւղի մէջ յաջողեցան շատ վայրենիներ սպանել, գուցէ և բոլորին կոտորէին, եթէ շատերը գետը թափուելով չը փրկուէին: Այդ բանը առիթուեց Ալբերտին իւր բարեկամ Պուլրօպին գրելու թէ՛ առա Ելիզաբէթին, որ ինքը նորա գտզանների ժողովածուն լցնելու համար պիտի ուղարկէր ձեր բոլոր Մատիկաններին, Խուարկիներին, Խուակիներին, Խոնդիներին ու Բէկերին, եթէ այդ ցամաքակենցաղ անասունները յանկարծ ձկների փոխուած չլինէին: Այդ պատճառով ստիպուած է ինքը որաորդութիւնը ժողած ձկնորսութեան ձեռք զարկել և կարթերի համար արգէն հոգացել է, այնպէս որ վստահ է իւր յաջողութեան:

Սակայն հարկ է նկատել, որ գնտի ամենից քիչ մեծ մեծ բրդողներն և պակաս դիւրահաւատներն անգամ, որ ներկայ էին թշնամու ցիր ու ցան լինելուն, ապստամբութիւնը յաղթուած էին կարծում և Հաւաստի էին, որ նոցա այլ ևս ոչինչ չէ մնում, բայց միայն յաղթանակով կզզու վերայ պտոյտ անել վայրենիների հպատակութիւնը ձեռք բե-

ըելու և ապստամբութեան գլխաւոր նիւթիչ-
ներին պատժել:

Բայց նոքա խաբուեցան: Երբորդ օրուան
առաւոտը երբ Անգլիացիք պատրաստվում էին
յառաջ խաղալ, լուսաբոցին յանկարծ նկառե-
ցին, որ աջակողմեան բլուրները ու ամպերով
ծածկուած էին; և երբ լուսացաւ տեսան բո-
լոր գագաթները զինուորեալ վայրենիներով
ծածկուած, անհամեմատ մեծ բազմութեամբ
քան նոքա, որոնց քշել էին խրամատներից:
Նոքա այնպիսի գերք էին բռնել, որի ընտ-
րութիւնը ապացուցանում էր իրանց առաջ-
նորդների ճիշդ ռազմագիտական խելքը, և
միանգամայն նոցա յարձակուելու և ոչ լոկ
պաշտպանութեամբ բաւականանալու նպա-
տակը:

Որքան և մեծ լինէր մեր լորդի անձնա-
կան և ազգային պատուասիրութիւնը, այնու-
ամենայնիւ այդ անակնիալ և յանկարծահաս
տեսարանը ապշեցրեց նորան: Վայրենիները,
երեք մասի բաժանուած, բռնած էին բլուր-
ների գագաթները: Նոցա մեծագոյն մասը բո-
լորովին մերկ էին, միւսերը գոյնզգոյն ցնցո-
տիներ ունէին վերան կախած: Նոցա ճանկ-
րած երեսներն ու մարմինները մի գագանա-
յին, սարսափելի տեսք էին տալիս նոցա: Ի-

րանց խիտ, գագաթի վերալ ծամով հիւսած
մազերի մէջ սպառնալից կերպով ցցել էին դի-
շատիչ թռչունների փետուրներ: Զեռքերնին
ունէին մի քանիսը մերէ կոչուած ահագին
լախտեր, միւսները նիզակներ, ծայրը սուր սուր
քարեր կամ ձկան փշեր անցուցած, կային այն-
պիսիներն անգամ, որ հրացաններ ունէին, ո-
րոց գործածութիւնը նոր-Զելանդացիներին ի-
րանց նուաճողներն էին սովորցրել:

Նոքա լուռ և անշարժ կեցած էին, քա-
րէ արձանների նման:

Վերջապէս արևն ելաւ բլուրների լետե-
ւից: Նոյն րոպէին վայրենիների ամբոխը շար-
ժուեցաւ և չափաւորեալ քայլերով սկսուեցաւ
պիրիիրուս (ապատերազմի պար), որ նոյն իսկ
մեր լորդի նման մարդու վերայ, որ պատե-
րազմի գործերում անփորձ չէր, չէր կարող իւր
ներգործութիւնը չունենալ: Հազարաւոր կո-
կորդներից կարծես միաբերան հնչուեցաւ պի-
խի (ապատերազմի երգ), որոյ վայրենի ոռնոցը
նոյն իսկ քաջերին սարսափ լցնել կարող էր,
և որոց ճչալից աղաղակների հանգին հետե-
ւում էին պարի շարժուածքները:

Նախապէս երգեցին երգ մահուան, այ-
սինքն մեծ գաղտնիքի, որով Ատուաս, ամե-
նաբարձեալ էակը մարդուն ոչնչացնում է, և

2
ՌԱՊՈՅԻ ԴՐԱՄԱԿԱ ԽՈՎԱԿԱ 7/11-1922
ԽՈՎԱԿԱ ԲՈՅՈՒԹԵԱ
ԱԽԱՐԱ, ԽՈՎԱԿԱ ԱՇԱՎԱՐԱ
ՄԱՍՄԱՆԵԱՅԻ ԱՇԱՎԱՐԱ

որոյ անմահ անձնաւորութիւնը միանում է իւրեան և իւր յաւիտենական գոյութեան հետ:

Յետոյ օրհնաբանեցին սուրբ անուշահոտութիւնը, որով հոգիք երկինք են համբառնում և նուիրվում են Ատուասին իրեւ հաճելի կերպուր: Սկզբում ձայները լուրջ էին, աչքերը շուտ շուտ դէպի երկինք ուղղած և իրանց հանդիսաւոր շարժուածքների մէջ խորին աստուածապաշտութիւն: Սակայն հետզհետէ նորանց կրօնական ոգևորսութիւնը աւելացաւ և վառուեցաւ մինչև ժայթքուն վայրենի կրքերի: Աչքները սկսեցին փայլատակել, ձայներն ալնպիսի սուր թափանցկութիւն ստացան, որ այլ ևս մարդկային չէր և իրանց շարժուածքը նման էին դիւահարների շարժմունքին:

Շուառով երգը մի տարօրինակ ողբի փոխվեցաւ, որի միջից դուրս էին ձգում երբեմն դազանական ոռոնց: Դա նոցա սուգն էր, որք սպատերազմում պիտի ընկնէին և նոցա մարմինների ոչնչանալու լաց ու կոծը:

Նատ չը տևեց, նոցա մարմնոյ անդամները սկսեցին ջղալին ցնցումներ անել, աչքերը ահաւոր կերպով դառնում էին իրանց խորշերում, լայն բացած բերանների շուրջը

գիզուած էր սպիտակ փրփուր և նոցա մուընչիւնը նման էր հեռաւոր որտաման:

Լախտերն ու նիզակները ճօճելով ոկտեցին ոտքերով հողը փորել: Երգի այս մասը վրէժխնդրութեան մաղթանքն էր:

Հետզհետէ նոցա մարմինների ջղալին ցնցումները գագրեցան, շարժուածքները չափաւորուեցան, և ձայների հնչմունքը հանդիստ, գրեթէ ողբագին դարձան: Նոքա, որ սպատերազմում ընկնելու էին, միխթարում էին իրանց մարքերը նոցա լառաջիկայ ծանր կարուսաի համար:

Այդպիսով վերջացաւ պի-խին, այն տարօրինակ հոգեհանդիստը, որ բնութեան աներկիւղ որդիքը կատարում էին իրանց վերայ: Սնգլիացիք, տեսնելով նոր - Զելանդացիներն այդպէս մօտիկ, իսկոյն սպատրաստուել էին նոցա վերայ յարձակուելու, սակայն կէս զարմանքով կէս սպատրափով զգայուած կանդ առան և ակամայ սպասում էին լայն վայրենի ծիսակատարութեանց վերջանալուն:

Գ.

Երգն ու պարը աւարտելուն պէս, Նոր-
Զելանդացիք չսպասեցին Անգղիացոց յարձակ-
ման, այլ իրանց միջից հրացանով զինուած-
ներին իբրև արձակամարտ (Tirailleurs) յառաջ
մղելով, միւսերը բուռն ուժով նոցա ետևից
խոնուեցան և յառաջ քան անգղիացի ռմբա-
ձիգները ժամանակ ունեցան թնդանօթները
կրակ տալու՝ սկսուեցաւ լանջ առ լանջ կուիւ:

«Այս Բնչ է», կանչեց Բօբլէ, որ ձախ
թևի վերայ մի թնդանօթ էր կառավարում-
«իրաւ կարծեմ, որ այդ հեթանոսներն երա-
զում են մեզ գրոհ տալով տապալել: Դոքա-
միանգամայն առաջեկց և յետևից են վրայ
տալիս: Նանթեցէք նաւակալմից, կրակ տուէք,
և ծովն ածեցէք գրանց: Առաջին ռումբ-
զարկ»:

Բայց Ֆիդիս Նապուլօնը, որ այն հռչա-
կըն ունէր թէ՝ ամեն պատերազմում առաջին
թշնամին իւր ձեռքով պիտի ընկնի, յանկարծ
թռաւ հասաւ թնդանօթի բերանին և վայր
գլորեց զինուորին, որ պատրաստվում էր պատ-
րոյիը գնել:

«Նաւակալմից, բառաջ, յառաջ» աղաղա-
կում էր Բօբլէ: «Պաշոյներդ դներս, տղալք-

դոքա բոլորը մերկ միս են, շամփրեցէք, մին-
չև բազուկներդ յոգնեն»:

Եւ սուրը մերկացըած վազեց վայրենի-
ների վերայ: Բայց նա շուտով զգաց, որ այն
լերկ մսերը աւելի ամուր ոսկորներ ու զեր
ունէին քան ինքը: Կատաղածի պէս ընկաւ
երիտասարդ լորդը Ֆիդիսի հպատակներից ա-
ռաջին դէմը ելնողի վերայ, արդէն սուրը
բարձրացրած վայրենու մերկ կուրծքը պիտի
կոխէր, մինչ վերջինս կատուի գալարուածքով
հարուածից փախչելով յետ ցատկեց և կալճա-
կի արագութեամբ լախար ճոճելով անկասկած
լորդի գլուխը պիտի ջախջախէր, երբ սորան
այն կազմից, ուստի երեք չեր սպասում, յան-
կարծակի օգնութիւն հասաւ:

Ֆիդիս, առանց կարողանալու իջնող լախ-
տին դէմ դնել, հարուածողի ձեռից պինդ
բռնեց «Տանգատա, տանգատա (սպայ է, սպայ)

ձայն տալով: Դորանով հարուածի ուժը կոտր-
վեցաւ և Բօբլէի կեանքն ազատուեցաւ: Բայց
և այնպէս նա իւր կալծակնահար գետինը
փոռուեցաւ: Նորա չորս կողմը ամեն բան խա-
ռըն ի խուռն պտտում էր, հազարաւոր կայ-
ծեր փայլատակում էին դիմացը, մահուան
ու անգթութեան տեսարաններ անցնում էին
նորա պղտոր աչքերի առաջ, մեռնողների հա-

ուաչք ու անէծքը խոնվում էին ականջին,
մինչև որ աչք ու ականջ կուրացան ու խլա-
ցան և ինքը մեռեալի նման անզգայ մնաց
գետնին փռուած:

Երբ ուշք ու միտքը տեղն եկան ու աչ-
քերը բացաւ, այն տեսաւ, որ ինքը մի լաղ-
թանդամ վայրենու կոնակն էր, որ իւր ցե-
ղից շատերի հետ ի միասին վազ է վազ փախց-
նում էր իրան: Իւր առաջին շարժուածքն
էր ձեռքը դաշոյնին տանել, բայց նորա զէն-
քերը խլել էին և ձեռքերն աղեղի լարով ա-
ճուր կապել:

Իզուր ջանք էր անում կապանքը խոր-
տակել, այդ ճիգը միմիայն սպառում էր նո-
րա թուլացած ուժերն և սաստկացնում էր
տենդը, որ իւր երակների մէջ լուզվում և իւր
զգալարանքը խլում էր: Երբ տենդի մէկ հա-
րուածից մինչև միւսն այնքան ուշքի էր գա-
լի, որ ինքն իրան ու շրջապատող առարկա-
ները լիշում էր, մէկ տեսնում էր ինքը զին-
քը վայրենու կոնակը, մէկ էլ իրան թւում
էր թէ մի հինաւուրց անտառի մէջ գետնին
պառկած է, պարանով ծառից կապած, տասն,
տասներկու պահապաններով շրջապատուած:
Դարձեալ երբեմն թւում էր թէ ձգուած
պառկած ու մի վայրենի մակոյկի լատակում,

որ իւր պահապանները թիւվարելով իրեն ան-
ծանօթ ափի էին դիմում:

Աերջապէս մի անգամ էլ իւր խորին
թմբութեան հակառակ, զգաց որ իրան հան-
դարտ վեր քաշեցին և իւր երևակայութիւնը,
որ արթուն էր, մինչդեռ իւր մարմինը քնած,
ձեացնում էր իրան, որպէս թէ ինքը, Ամ-
ֆիտրիտի խարիսխը դարձած է, որ ծովի լա-
տակից ծանրագողոթ վեր էր ոլորւում: Երբ
աչքերը բացաւ և չորս կողմի առարկաները
դիտեց, հասաւ այն եզրակացութեանը, թէ
հասած է արդէն իւր ակամայ ճանապարհոր-
դութեան կայանը:

Ալքերտն անսասելի զմուլմամբ լառեց իւր
աչքերն այդ սիրուն երևոյթին, բայց երբ վեր
նայեցաւ, տեսաւ Ֆիդիսը սորառնալից և կա-
տաղի դէմքով նորա ետևը կեցած, կարծես
մի սովատանջ գիշատիչ թուչուն անմեղ աղաւ-
նու վերայ:

«Էմաէ» ասաց Ֆիդիս «Էկօ-Տօրօն, կա-
խարդութեան Աստուածը սովորեցրել է քեզ
այն բոլորը, որք ծածկում են վէրքը և դէպ
երկինք սլացող Փայդուան (Հոգին) նորից դէ-
պի մարմինն են դարձնում: Բժշկիր, քուրիկ,
այդ պակեկան, մենք պիտի նորան կերակրենք
ու դիրացնենք, որովհետեւ քսան օրից լետոյ

ես նորան կը մորթեմ որպէս զի հօրս հոգին
նորա հոգին ուտի, իսկ ես նորա աչքն ու
ձեռքը: Քեզ, Էմաէ, տալիս եմ նորա երկու
բազուկները, որ ցեխու (փոքրիկ որինդներ)
շինես և արենարբու Կահեկումուի հետ նուա-
գես:

Ոլդ հրամանը լսելով և նկատելով Ալ-
բերտը դարձեալ ուշքի եկաւ, Էմաէն հան-
դարտ բռնեց նորա ձեռքը և ասաց անգլիե-
րէն. «Որտեղդ է ցաւում»:

Ալբերտը պշացաւ մնաց աղջկան վերայ:
Երբէք որեւէ անուշ դալլալիկ ալնալէս քաղցը
չէր դիպել նորա ականջին, որքան այն իւր
լեզուով արտասանած խօսքերը սիրուն վայրե-
նուհու բերանից:

«Անգլիերէն խօսում ես» կանչեց նա,
ուրախութիւնից իւր ցաւերը մոռանալով: Ո՞ր-
տեղ ուսար մեր երկրի լեզուն»:

«Արիկաները (քարոզիչները) սովորեցրին
ինձ: Բայց ցնց տուր ինձ, որտեղ է ցաւդ:

«Այստեղ և այստեղ եմ վիրաւորուած» ա-
սաց Ալբերտը թևն ու գլուխը ցոյց տալով:
«Բայց հոգ մի անիր ցաւերիս: Եղբ ես այն
կատաղի կերպարանքների փոխարէն քո խո-
նարհ դէմքդ եմ տեսնում առաջս, երբ լսում

եմ ձայնդ իմ մալրենի լեզուով խօսելիս, ցաւ
չեմ զգում և մահը քաղցը է թւում ինձ:

Էմաէն մի թռուցիկ հայեացք ձգեց եղ-
բօրը, և տեսնելով, որ նա դէպի իւր հօր գե-
րեզմանն է նայում, քնքուշ շարժուածքով
մատը դիեց գերու բերանին, կարծես լուռ-
թիւն պատուիրելով:

Յետոյ գնաց ներս և շուտով դարձաւ
ձեռքին մի մեծ խեցի (Muschel) մի տեսակ
հեղանիւթով լիքը:

«Խմիլը, սա քեզ կը կազդուը» ասաց նա:
Ալբերտը երկու ձեռքով յափշտակեց խեցին,
այլ և այն ձեռքը որ մեկնում էր այն: Դան-
դաղաբար խմեց միջի եղածը մինչեւ վերջին
կաթիւը, թէպէտե ըմպելիքը համը իրեն ա-
մենեին ախորժելի չէր: Բայց երկար չտեսց,
և ահա զգաց նորա բարերար ներգործութիւ-
նը: Հետզհետէ իւր անդամների կարկամու-
թիւնը կորաւ, և իրան թւում էր, թէ իւր
ջիղերը նորանոր ուժերով լարւում են:

Մինչ այն Էմաէն զանազան բոյսեր սեղ-
մել մանրել էր երկու քարի մէջ և կաֆաի
(Kava) հիւթով թրջելուց յետոյ կապեց նրան-
ցով հիւանդի վէրքերը: Յետոյ բերեց վայրի
ձարխոտերի (Farnkraut) արմտիք և երկու ե-
րեք ծուկն, որք տերևներով վայրաթուած ու

տաք քարերի վերալ խորոված էին և խնդրեց
Ալբերտին ուժել:

Ակսել այն օրից, երբ վիրաւորեալի հոգատարութիւնը իրեն յանձնուած էր, մանկահաս վալրենուհին օրուայ մէջ յաճախ կըրկնում էր իւր այցելութիւնը և որպա տեսքն աւելի փրկարար ներգործութիւն ունէր հիւանդի վերայ քան բոլոր դեղօրալքն ու բոյսերը, թէպէտե Եկո-Տօրօն սովորեցրած էր նոցա գործածութիւնը: Բայց ամեն փաղաքշանք, ամեն սրտաշարժ խօսք, որ Ալբերտը ուղղում էր գէպի նա, նորա գութը շարժելու անօգուտ եղան. որքան և համոզուած էր, որ Ֆիդիսը, և ոչ Կափ-Կումուն կամ միւս վայրենիները, որք միշտ ներկայ էին նորա այցելութեանց, իւր խօսքերից ոչ մի բառ չէին հասկանում, բայց և այսպէս կմաէն միշտ լուռ էր և պատասխանում էր իւր խօսքերին միմիայն համառօտ ու անտարբեր կերպիւ: Սակայն երբեմն կարծես թւում էր իրեն, կամ գուցէ երևակայում էր, որ նորա աչքերը գըթութեամբ էին նայում իրեն, և արտասուքով թրջուած էին: Լաւ յիշում էր, որ երկութէ երեք անդամ տեսած էր ինչպէսնա գուրս ելնելիս մատը բերնին էր գնում, իբրև կըրկին և կըկին խորհուրդ տալով լոել:

¶

Բօրլէի գալուց յետոյ տասներորդ օրը մեծ յուզմունք կար Պա-ի մէջ: Բոլոր արրմարդիք վազեցին գէպի ցանկապատը, այսինքըն դէպի ժայռի ջրին գարձած կոզմը, յետոյ յետ դարձան գէպի տուն, զէնքերն առին շտապով հեռացան, թողնելով շատ փոքրաթիւ զինուորներ:

Մեծ անհանգստութեամբ գիտում էր Ալբերտն ալդ երեսլթները. չգիտէր երկիւղ թէ յուս տածել ալդ յուզմունքից: Ուստի, երբ Էմաէն իրեն կերակուր բերաւ—այս անգամ մենակ մնացին նորա հետ—հարցրուց նորան, թէն գիտէր, որ պատասխան չալիտի առնու, թէ՝ ինչո՞ւ մարդիք հեռացան: Բայց հակառակ ակնկալութեան, աղջիկը պատասխանեց. «Հեռուն, ծովի վերայ մի տիպաի (նաւ) է երեացել ուստի նոքա գնացին հեռի գէպի սարաւանդը գիտել ալդ նաւը, երկիւղ կըրելով, մի գուցէ ուղարկուած լինի այն մեր դարանը գտնելու կամ քեզ ազատելու համար»:

«Եւ միթէ ձերոնք իրաւ մտադիր են ինձ սպանել: Գուցէ ինձ բանտարկած պահում են, որպէս զի առատ փրկանք ստանան հարցրեց Բօրլէն:

«Ձեր արիկաները (քարողիչները) ինձ մի նոր Աստուած են ճանաչեցրել, որ սիրում է մարդոց, արիւնհեղութիւնն ու մարդակերութիւնն ատում: Իսկ ինձ, վայրի աղջկաս, վիճակուած է վայրենութեան մէջ ապրել և ես պիտի իմ ցեղի ծէսերին ու սովորութեանց հաւանեմ, թէպէտե զգվում եմ նոցանից»:

«Ինչու վայրենութեան մէջ ապրել» հարցրեց Ալբերտը տափանօք նորա ձեռքը սեղմելով: «Եկ ինձ հետ մեր քաղաքները, դու նոցա զարդը, այնտեղի հասարակութեանց պարձանքը կլինիս: Փախչենք ի միասին: Օգնիր ինձ փախչելու, առաջնորդ եղիր ինձ արտանծանօթ ճանապարհներում և դու փոխանակ իրձմի ոսկեզրդ տների մէջ պիտի բնակիս, փոխանակ անտառներում թափառելու, սիրուն կառքերով պիտի զբունիս»:

«Երջանկութիւնը» պատասխանեց աղջեկը հառաջելով, «ոսկեզօծ տների և սիրուն կառքերի մէջ չէ տպրում, այլ...»

«Ալլ» ասաց Ալբերտը:
«Ալլ» կըկնեց աղջիկն ամաչելով և վայրենու համար մի զարմանալի քնքշութեամբ, «այլ ապրում է նոցա սրտերում, որք սիրում են միմեանց»:

«Եւ ուր, սիրելի հոգեակ» կանչեց Բոլե-

«Թշուանու, խղճուկ Պակեկա» ասաց Եմաէն թաց աչքով: «Յոլսը խաբուսիկ ընկեր է. երբ քսաներորդ արևը մարդ կը մտնի, Խուրակիի որդին քեզ, արևելքի սպիտակ որդուդ, կը զոհի որպէս զի քո հոգին իմ հօր հոգուն կերակուր դառնալ»:

«Բայց որովհետեւ Ֆիդիսը քո եղբայրն է, միթէ չես կարող միջամտել ինձ պաշտպանելու:

«Հօրս արեան ձայնն աւելի զօրաւոր է քան իմս», ասաց Եմաէն մաղձոտ ձայնով: Քո գերութիւնը մեծ հանդէսով տօնուեցաւ. Քո եղբայրները կալսեցին ծերունի Խուրակին, քո եղբայրները կոտորեցին մեր մատաղ զինուորներին: Վրէժը նոր-Զելանդացու ամենամեծ հաճոյքն է: Եւ եթէ Ֆիդիսը քեզ չը սպանի այնուամենանիւ դու պիտի լինիս Կափ-Կումուի սեփհականութիւն, որ իմ եղբօրը ընծաներ է տուել ինձ հարսնացու անելու համար»:

«Ի՞նչ ես ասում» կանչեց Բոլեն, «այն անգութ, արիւնուուշտ վայրենին քո ամսուսինդ պիտի լինի, Եմաէ: Դու, ալդակս սիրուն, ալդակս հեղ, հրեշտակալին հայեացքով ու երկնային սրտով պիտի կենակից լինիս մի թշուառի, որի համար սպանութիւնը վայելք է, վրէժը հաճոյք:

ոգևորուած, «մւր կարող ես գտնել մի սիրտ, որ աւելի թունդ սիրով և լի երախտագիտութեամբ բարախէ քեզ համար, քան իմ սիրալը»: Այդ ասելով քարշեց նորան գէպի ինքը և խոնարհեցրեց իւր երեսը նորա երեսին: Նոցա շունչը խառնուեցաւ միմեանց, գա այն երկներում խորին սիրոյ նշան է և փոխարինում է համբոյրը, որ այնտեղ անլայտ է:

Բայց նոյն բոպէին դպաց կմաէն, ոոք ելաւ և դուրս վազեց, որովհետև նորա սուր ականջը զգացել էր մօտեցող վալրենիների քայլերը: Արդարեւ, երկու բոպէից յետոյ երեւացին նոքա, որք լրաեսութեան գնացած էին և ուրախ ուրախ պատմեցին, որ տեսնուած նաւը ֆրանսիական և ոչ անդիւկական գրօշ էր կրում և իւր ընթացքը ծովի այլ կողմը ուղղեց:

Վերի խօսակցութիւնից յետոյ Սլբերտը համոզուած էր, որ կմաէն կարեկցում է, և որ առաւելն է, սիրում է իրան: Բայց թնջօգուտ, նա չէր կարող մենակ պաշտպանել իրան այդքան վալրենիների դէմ, որք անհամբեր սպասում էին այն բոպէին, երբ իրան պիտի ուտէին՝ այլ և երկբայելի էր, թէ այժմ, երբ վալրենիներն արդէն վերադարձել էին, կարող էր ինքն առիթ գտնել կմաէն տես-

նելու և նորա հետ ազատ խօսելու: Մնում էր միայն այն բոպէները համարել որք գեռ մնում էին իրեն կեանքին:

Այդ պղտոր մտքերով յուզուած գլորուեցաւ իւր մահիճը: Բայց իւր յոգնած արտեանունքի վերայ քունն ալյքան ուշացաւ, մինչև լուսինը իւր ընթացքի կեսը կատարեց: Յետոյ եկաւ այդ քունը, բայց իւր հետ բերեց տգեղ, անհեթեթ երազներ, ուր նա տեսնում էր իրան իբրև զոհ մորթուած, մինչդեռ վայրենիները, գեերի կերպարանքով յօշոտում էին իւր մարմնի անդամները, և մինչդեռ կմաէն, որ հրեշտակի փոխուած լալով նալում էր, յանկարծ իւր մտքերից բռնեց և օդի միջով տարաւ գրեց այն կիւլերի մէջ տեղը, որ պատերազմի նախընթաց երեկոյին ժողովուած էին գնդապետ Կինտերիլի մօտ:

Ո ինչգեռ նորա ցնորքը նմանօրինակ սոսկումներ էին ցոլացնում նորան, նոյն իսկ այն բոպէին, երբ նա երազում տեսնում էր թէ ինչպէս Կաի-Կումուն իւր բազկի ոսկրից միսը քերում էր, որպէս զի ոսկորը սրինգ շինի, յանկարծ զգաց, որ մէկն իրօք իւր թեւը բռնեց: Վեր ցատկեց և արդէն բերանը բացել էր աղաղակելու, բայց ժամանակ անդամ չունեցաւ և ահա մի փափուկ ձեռք իւր շրթանց վե-

ըալ դրուեցաւ: Վեր նալեցաւ, տեսաւ իւր
առջևը կանգնած մի կին, որ մի թռչուն
կրծքին սեղմած բռնած էր:

Բոլորովին շփոթուած, կասկածելով հարց-
րեց ինքնիթեն թէ արդեօք Եմաէն է իւր դի-
մացը, վասն զի մութի մէջ այդ կնոջ գէմքի
գծերը որոշ չէին նշմարվում:

«Ես եմ» ասաց նա հանգստացնելով: Երբ
Պա-ի մէջ ամենքը քնած ու միայն լուսինն
էր արթուն, ես անկողնից ելայ և դէպի քեզ
սողացի, բարեկամ, քեզ փրկելու համար: Ե-
թէ եղբայրս մտադրութիւնս գիտենար, հօրս
ուդուպայի վերայ կոսպանէր ինձ և Կախ-Կու-
մուն արիւնս կծծէր երակներիցս: Բայց թող
Ֆիդիսը ինձ սպանի, թող Կախ-Կումուն ա-
րիւնս խմի, ես տիպօկօից (մահից) չեմ վախե-
նում, եթէ կարենամ քեզ նոցա վրէժից ա-
զատել:

«Դու եկել ես ինձ փրկելու, ով Եմաէ»,
կանչեց Ալբերտը. «ականց ինձ չէ խարում,
դու մի խարուսիկ ուրուական չես, որ երկն-
քից վար է իջել ինձ սփոփերու: Ինձ փրկել-
Եմաէ, ինձ Պա-ից գուրս հանել. նալատակդ լաւ
է. բայց անպտուզ: Ցանկասպատից գուրս այն
թանձր անտառները, այն տաղտուկ ամալիքն
ինձ բոլորովին անծանօթ են: Առանց ուղե-

ցոլցի պիտի թափառեմ ալնտեղ, մինչեւ որ սո-
վամահ լինիմ կամ քո հալրենակիցքն ինձ նո-
րից ձերբակալեն:

«Ո՛չ», ասաց Եմաէ, «ես քեզ կառաջ-
նորդեմ: Ես ձգում եմ հօրական խրճիթս, Հե-
ռանում եմ իմ ազգից. Ես կուզեմ ալնտեղ
մնալ, ուր դու պիտի մնաս, կուզեմ քեզ հետ
արեկ լուսը վայելել: Իմ շունչը քո շնչին պի-
տի խառնուի և իմ գերեզմանը քո գերեզմա-
նի մօտ պիտի փորուի»:

«Ա՛հ, եկ, սիրելի Եմաէ», կանչեց Ալբեր-
տը, տարփանօք գրկելով նորան բազկաց մէջ.
«Եկ, գնանք այնտեղ ուր մարդիկ հեզ են, ի-
րարու իբրև եղբայր սիրում են: Նոքա քեզ
վերայ կը հիանան իբրև ծովի քաղցր աղջկայ
վերայ, քեզ կը յարգեն իբրև կզգիների գե-
ղեցիկ թագուհի, իբրև Ռանդատիրայի իմաս-
տուն աղջիկը»:

«Ինձ բաւական է, եթէ մալրդ ինձ իբ-
րև իւր դուստր ընդունէ: Աշխարհը և իւր
զարմանքն ինձ համար գին չունին», յարեց
Եմաէն այնպիսի ձախով, որ սրտից էր գալի»:

«Եկ ուրեմն, սրտակից բարեկամս» ասաց
Բօրլէ ուրք ելնելով և Պա-ի ելքին մօտենալ
ուզելով. «Եկ վախչենք քանի երկնքի աստղե-

ըլ դեռ չեն մարել և յառաջ քան արշալոյսը
մեր քալլերը մատինէ»:

«Ո՞չ, «Դիմադրեց Եմաէն սոսկալով.» կաց.
մի շարժիր տեղդ, եթէ ոչ կորած ես: Դու
կարծում ես՝ բաւական է որ կամենանք և
պիտի կարենմնք փախչել: Աճմիտ. Խուրակիի
որդւոց աչքերն երկնքի աստղերի պէս ար-
թուն են, և եթէ մեզ յաջողեր իսկ փախչել,
Խուրակիի որդւոց ոտներն այնպէս արագա-
թուիչ են, որպէս քամին սարեկի ծայրում.
Եսկոյն կը հասնէին ու կըռնէին մեզ յառաջ
քան եղբայրակիցներիդ բնակառնը հասնելը»:
«Ուրեմն ամեն կողմից յուսահատութիւն
և մահ»:

«Լոիրյ գժբաղտ օտարական, թէ ես ինչ
մտադիր եմ անել քեզ համար: Եթէ յանցանք
եմ գործում, թող պակեկաների ամենազօր
Ս.ստուած (քրիստոնեաների Ս.ստուածը) ներէ
ինձ: Քանի մի ժամկից յետ երբ արել կելնէ,
մեր ցեղից բազմաթիւ կանայք կերթան մի այլ
պա սլաշարեղէն բերելու. ես նոցա հետ դուրս
կելնեմ, այնպէս որ ոչ ոք կարող է կասկած
տանել: Այն գիմացի լերան վերայ մի տեղ
գիտեմ, ուր ձեր արիկաներից մինը (քարողիչ)
իմ ցեղին ձեր խաղաղաւէր հաւատը ուսու-
ցանելու համար, շատ անդամ իշխանում է:

Դա նոյն մարդն է, որ ինձ քո լեզուն և քո
Աստուծոյ գօրութիւնը սովորեցրեց: Ճանապար-
հին ինձ կը յաջողի ընկերներիցս գաղտուկ հե-
ռանալ ու ծածուկ նորան երթալ: Ես նորան
կասեմ թէ գու ինչ վտանգի մէջ ես, քո բան-
տարկութեան տեղը կիմացնեմ իրան, որպէս
զի նա եղբայրակիցներիդ փութայ և նոցա
գօրքը այս հրուանդանի գիմացի ափը բերէ:
Այս աղաւնին, որ ձեռքիս ունիմ, այնտեղ կը
թողնեմ: Սա իմ բերանից է ուտում հատիկ-
ները և ջուրը ափիս միջից խմում: Երբ քո
համազգիները գիմացի ափը հասնին, թող նա
թղթի մի թերթիկ կապէ այս աղաւնու ոտին
և արձակէ. սա իսկոյն կը թուչի կը գայ ինձ
և այդպէս մենք նոցա գալուստը կիմանանք:
Այնուհետև եթէ յաջողինք փախչել և ձե-
րախոց հասնել գու փրկուած ես: Բայց միտ
դիր որ ես այդ վարմունքովս ազգիս դաւա-
ճան եմ դառնում և նորա վերջին ապաստա-
նը թշնամու ձեռքը մատնում: Ուստի խոս-
տացիր ինձ որ եթէ յաջողիս ազատուել, զօ-
րականներիդ չես թոյլ տայ Պահին մօտենալ,
կամ խուրակիի որդիներից որ և է մէկին մի
վնաս հացանել»:

Սլբերտը խոստացաւ Եմաէին ամեն բան,
ինչ որ սա պահանջում էր, և շնորով տեսաւ

թէ ինչպէս նա շատ ուրիշ կանանց հետ իմի-
ասին Պառ ձգեց զնաց: Նորա բացակալու-
թեան երեք օրը սպանիչ ծանրութեամբ ան-
ցան Բօրէի Համար: Արդեօք կը յաջողի՞ նո-
րան իւր ընկերուհիներից հեռանալ և քարոզ-
չին իւր թագստեան տեղում որոնել: Արդեօք
կը գտնի՞ սորան այն տեղ և սա յօժար կը լի-
նի՞ իւր լանձնարարութիւնը կատարելու: Այդ
հարցերը կեանքի և մահու հարցեր էին իւր
Համար և անշուշտ Ալբերտն առաջնորդն հա-
ւանականութիւնը գերադաս էր Համարում:

Վերջապէս կերագարձաւ Էմաէն բարե-
համբաւ լուր բերելով: Նա քարոզչին հան-
դիպել էր անտառում և այդ բարի քահանան
ինքը զինքը պատրաստ լալտարարեց իւր պատ-
րամը լանձն առնելու: Ամենամեծ անգիտա-
կան բանակը Կօրօրայկայումն է, մօտ երեք
օրուան ճանագարհ, այնպէս, որ եթէ օգնու-
թեան եկողները փութան, մահուան նշանա-
կուած վախճանից մի օր առաջ պիտի տեղ
հասնեն:

Երկիւզի և յուսոյ մէջ անցաւ յաջորդ-
շաբաթը, իւրաքանչիւր ըօպէ Ալբերտի Հա-
մար տանջանաց յաւիտենականութիւն էր: Ցե-
րեկը, երբ Էմաէն իրեն կերակուր էր բերում,
մօտենում էր իրեն լուռ ու տխուր դէմքով:

Դակ գիշերը, երբ քունը փակում էր Խուրա-
կիի որդւոց աչքերը, վեր ենող լուսինը և
անհետացող աստղերը նոցա միմեանց հետ էին
տեսնում:

Վեց օր անցել էին արդէն, եօթներոր-
դը, որից յետ Ալբերտն այլ ևս լոյս չպիտի
տեսնէր, սկսուած էր, բայց սպասած օգնու-
թիւնը դեռ չկար: Հետեւալ առաջօտը, արևի
առաջին ճառագայթների հետ Խուրակիի Փայ-
դուան (Հոգին) պիտի վայր իջնէր օտարակա-
սի հոգւով կերակուելու համար:

Նախապատրաստութիւնք այդ մեծ զոհի
համար—մանաւանդ մեծ ևս՝ քանի որ դա
վրիժահանութեան գործ էր—սկսած էին ար-
դէն: Գրեթէ բոլոր փայտեալ կուռքերը կար-
միր ներկով նոր ներկուած էին, նոր փսխաթ-
ներ նախկին ցեղապետի Օդուպայի վերայ վը-
ռած և փայտակոյտը, որոյ վերայ պիտի կո-
տարուէր զոհը, արդէն պատրաստ: Ալբերտը,
սաստիկ գունաթափ, ներկայ էր այդ ամեն
պատրաստութեանց, մէն մի կացնի հարուած
սոսկալի հնչուում էր իւր սրտում: Մօտ կէս
օրին Էմաէն բերեց իւր ճաշը, վերջինը, որ
պէտք է ուտէր: Օգտուելով մի ակնթարթից,
երբ նկատեց, որ իրան չեն տեսնում, գլու-

իր խսնարհեց զէպի Ալբերտը և շշնչաց՝ «բարեկամ, ես քեզ հետ պիտի մեռնիմ»:

Ե.

ծաշից յետ սկսուեցան պատերազմական խաղեր, որ միշտ կարապետում են այն վայրենիների հանդիսաւոր զոհաբերութեանց: Պա-ի մեծ հրապարակի վերալ ժողովուած էին ցեղի բոլոր զօրականները, զոհը ներկալ էր: Նախ երգեցին ու պարեցան Պի-խին: Յետոյ սկսուեցաւ մի խուլ մեռելալին շարական, որին մի քանիսը դաշնակցում էին մարդկային ոսկրներից շինուած սրինգներով և այդ ողբի մէջ Կաի-Կումուն բոլոր միւսներին գերազանցեց:

Այնուհետև հանդէս եկան ըմբշամարտութիւնք և ոյժի փորձեր, որոց մէջ Ֆիդիս ամենից նշանաւոր եղաւ: Դոյց յաջորդեցին մարզութիւններ մերէով (լախտով) և Կաի-Կումուն մի հարուածով ջախջախեց մարդու հաստութեամբ մի ծառ, իսկ Ֆիդիս իւր լախտը զարկեց մի ապաւաժի, որ ապակու նման փշրուեցաւ: Կարգը հասաւ նետաձգութեան: Պա-ի հակառակ ծալրում կանդնեց վայրենիներից մինը, որ ըստ տեղական սովորութեան

մի փետուր ունէր ցցած իւր մազերի մէջ: Ֆիդիս առաւ մի նետ, անցուց ազեզին, և լառաջ քան միւսը կարող էր իմանալ թէ բանն ինչումն է, արձակեց և նետը գնաց միջից ճեղքեց փետուրը: Այդ բանը ընդհանուր զուարձութիւն պատճառեց Պա-ում:

«Նատ սիրուն» ասաց Կաի-Կումուն. «բայց դու տեսնո՞ւմ ես օդի մէջ այն ուե կէտը»:

«Տեսնում եմ», ասաց Ֆիդիս: «Բայց չգիտեմ ինչ է»:

«Հիմա կը տեսնենք», ասաց Կաի-Կուման և նետը արձակեց:

Սև կէտը, որ հորիզոնական ուղղութեամբ էր շարժվում, սկսեց յանկարծ վայր իշնել և հետզհետէ մեծանալով, գետին ընկաւ մի սպիտակ կուկուպա (տնալին աղաւնի) Կաի-Կումունի նետով ճեղքած:

«Ի՞նչ սիրուն թռչուն է» կանչեց Էմաէն վազելով աղաւնու վերալ և վեր առնելով որպէս թէ դիաելու, և դառնալով գէպի Ալբերտը ցոյց տուեց թռչնիկի ոտը:

«Թերթիկը» շշնչաց նա շտապաւ: Ալբերտը դողաց այդ խօսքերից և իւր գունաթափ ալտերը վառ կարմիր ներկուեցան:

Կախ. Կումուն ստացաւ երևելի նետաձիգի մրցանակը:

Մինչ այս մինչ այն, արևը սկսաւ դէպի մուտքը խոնարհել և վայրենիները ցրուեցան գնացին իրանց խրճիթները, անհամըեր սպասելով առաւօտեան արշալուսին, երբ սոսկալի հանդէսը պիտի տեղի ունենար:

Կէս գիշերին եկաւ Եմաէն Ալբերտին, որ անկասկած քնած չէր, ձգեց նորա ուսին այնպիսի մի վերարկու, որպիսին կրում են վայրենիները, առաւ նորա ձեռքը և նշան տուաւ իրեն հետեւել:

Փայլուն լուսինը վառ կեցած էր երկընքում: Երբ նոքա Պա-ի ծայրը հասան, վայրենու մէկը, որ ցանկապատի մօտ պառկած քընած էր, գլուխը վեր բառնալով հարցրեց:

«Այդ ով է զրջում»:

«Քնիր, Կարէ-Տէտէ» ասաց Եմաէն, «Ես եմ, Եմաէն» և արդ խօսքերը ասելիս Ալբերտը զգաց որ նորա ձեռքը իւր ձեռքի մէջ դողում էր:

«Իսկ միւսը» յամառութեամբ հարցրեց վայրենին:

«Ծառաներից մինն է», պատասխանեց Եմաէն, «դու կարող ես հանգիստ քնել, Կարէ-Տէտէ»:

Եմաէի դէմ մարդը ի հարկէ, ոչինչ կասկած չէր կարող ունենալ և ոչ մինը վայրենիներից չէր մտածի անգամ նորան իւր ուզած տեղն երթալը արգիլել, արդ կերպ մեր փախստականները Պա-ի ցանկապատից դուրս թըռան: Նոքա մագլցելով վայր իջան սեպացեալ ժայռից և առանց Եմաէի առաջնորդելուն ու օգնութեան Ալբերտը անտարակոյս իւր անդունդի խորքը գահավիժած կլինէր: Վերջապէս հասան մի տեղ, ուր ժայռին վերայ մի փոքրիկ խոռոչ էր ձեւանում, որ Պա-ի ցանկապատից անկարելի էր նշմարել: Այստեղ Եմաէն կանգ առաւ:

«Դու այլ ևս չես կարող ետեէս գալ» ասաց նա «առանց ժայռի վերայ ջախջախուելու»:

Յետոյ առաւ մի հաստ չուան, ամրացրեց ուսերի տակ և իւր մարմնի ու մօտակայ մի հաստ ժայռի բռնի շուրջը փաթաթելով, բռնեց չուանը ձեռքերով և Ալբերտին անդունդի վերայ կախելով, վայր իջեցուց նորան մինչեւ ծովի ափը, մինչդեռ Ալբերտը ձեռքով ոտքով օգնում էր իրեն դուրս ցցուած ժայռերի վերայ:

«Մի քանի ըռպէից լետ Ալբերտը նկատեց, որ մի այլ մարմնն նոյն ձեռվ վայր ի-

ջաւ և ինքնիրեն հարցնում էր զարմացմամբ,
թէ ով կարող էր Եմաէին օգնել, թոկը բըս-
նել: Բայց շուտով հաւաստիացաւ, որ վալր իշ-
նող առարկան չէ թէ Եմաէն, այլ երկու ծալ-
րը կարած մի եղի կաշի է, որոյ նպատակը ի-
րեն պարզ չէր:

Աերջապէս, լուսնի լուսով հիացմամբ տե-
սաւ նա Եմաէն, որ թեթև բայց հաստատ ոտ-
ներով, ապառաժի ամեն ցիցերն ու խորշերը
օգնութիւն առնելով, օձի պէս գալարո ելով,
սեպացեալ ժայռին կարծես կպած, հանդարտ
վալր սողաց:

Մատաղահաս աղջիկը նորա մօտ հաս-
նելուն պէս մատնացոյց արաւ ծովածոցը, որ
թէպէտև նեղ էր ալստեղ բայց յորդութեան
(Fluth) ժամը լինելով, սաստիկ խոռված էր:

«Սյս նեղուցն է, որ անջատում է քեզ
քո փրկութեան տեղից. մի մակուկ չէի կարող
միակ ալստեղ բերել, այլ և նա մեր փախուս-
տը կը դաւաճանէր: Կարող ես լողալով անց-
նիլ:

«Սյս ալէկոծութեան միջնվ» կանչեց Ալ-
բերտը գունաթափ.» դա անփախուստ մահ է:

«Վախենում ես փորձ փորձել», հարցը Ե-
մաէն:

«Չեմ վախենում» յարեց նա. «մահը ա-

մեն կողմից կրծտում է ինձ իւր ատամները.
գուցէ ծովը տինքան անդութ չէ, որքան քո
եղբայրներդ»:

Եւ արիաբար նետուեցաւ ալիքների մէջ՝
Եմաէն նորա յետելից, քարշ տալով կաշին, որ
չուաններով կապել էր իւր ուսերից:

Սկզբում քաջութեամբ կռվում էր Ալ-
բերտը փրփրադէզ ալիքների դէմ, բայց հո-
սանքը իրեն հակառակ էր, և շատ չանցաւ,
սկսեց թուլանալ:

Քանի շնչառպառ մաքառում էր, այն-
քան իւր շարժուածքը արագ ու անկանոն էին:
«Ել այս կաշուի վերայ», ասաց Եմաէն:

Ալբերտը հետեւց ալդ խորհրդին. կա-
շին, որի երկու ծալրերը կարուած էին, մի-
տեսակ տաշտ էր ձեւացնում, ուժեղ աղջիկը,
որ մի զլփինի կամ առասպելական մի ներէ-
յիտի նման լողում էր, սկսեց քարշ տալ երի-
տասարդ սպային, մինչեւ որ սա բաւական կը
կազզուրուէր նորից լողալու համար: Բաւական
ժամանակ յառաջ գնացին ալդ կերպ, արդէն
առաւտօտեան արշալուը սկսել էր շառագնել
և ահա Եմաէն կանչեց յանկարծ.

«Նուտոնի, շուտով, շտապի՛ր, լսում եմ նը-
րանց ձայնը». ասաց ու կրկնապատկեց իւր
ջանքը:

«Ում ձայնն ես լսում»:

«Նոքա իմացել են մեր փախուստը, հաշածում են մեզ, Խուրակէի որդիքը, ահա՝ լըսում եմ նրանց ձայնը։ Նոքա իջնում են ժայռն ի վայր, նոքա իրանց մակոյկները կը թռչեն և շուտով մեզ կը հասնեն, շտապի՞ր, որ բարեկամներիդ մօտենանք, մինչև նրանք մեզ կը հասնեն»։

Զ.

Փոխանակ նորա ջանքերը նորոգելու, էմաէի այդ խօսքերը, ընդհակառակը դանդաղեցրին Ալբերտի ուժերը, այնպէս որ նա ստիպուած էր նորից եզի կաշուի օգնութեանը դիմել։ Սոսկալի ըոսպէ էր։ Վայրենիները ցատկած էին իրանց մակոյկները, և առագաստները պարզած, թիերը սեղմած ընկան փախստականների լետեից։ Այս վերջինները, որք իրանց ուժերը այնպէս լարած էին, որ կարծես թէ իրանց մկանունքը ուզում էին կտրատել, յուսահատ մարտնչում էին զարկուող կոհակների դէմ։ Ամեն անգամ, երբ գլուխները դարձնում էին, տեսնում էին որ մակոյկները, որ սկըզբում ջրի երեսին ծովալին որոլների էին նըմանում, հետզհետէ մեծանում էին իրանց դի-

մաց, որքան նոցա սև պարանոյները իրանց մօտենում էին։

Անսովոր ճիգը նոյնչափ յոդնեցրել էր Բօբլէին որչափ և երկիւղը, և որքան աւելի զգում էր, որ այդ լողը իւր համար կեանքի խնդիր էր, այնքան աւելի նուազում էր իւր արագ շարժուելու ընդունակութիւնը։ Էմաէն միայնակ կարող էր փրկուիլ, օձաձուկի նման ձեղքում էր ալիքները, բայց իւր բարեկամն ազատելու հոգն էր որ զինքը լետ էր պահում։ Եզի կաշին, որոյ մէջ դարձեալ մտել էր Բօբլէն և որ ինքը քարշ էր տալիս, ընդդիմանում էր իւր շարժմանցը և աղջիկը սպառում էր իւր ոյժը նորան փրկելու համար, թէպէտ գիտէր նաև, որ եթէ նորից իւր ցեղակիցների ձեռքն ընկնի, ինքը նոցա կատաղութեան գոհ պիտի երթայ։ Թշնամին, գերին կարող էր տակաւին նոցա գութը շարժել, իսկ իրան, հերձուածողին, դաւաճանին սպասում էր մի անգութ, չարչարալից մահ։

Վերջապէս հասաւ այն ըոսպէն, երբ նազգաց, որ բոլոր իւր ջանքերը զուր են։ Նընչանպառ յառաջ էր ճգնում բայց մակոյկները հուալ ընդհուալ մօտենում էին, արդէն լըսվում էր նոցա թիերի շառաչը, մարդոց ձայները, որք հայհոյանքներ էին զրկում փախս-

տականներին, և դեռ ազատարար ափը հեռու էր:

Նունչ առնելը վախենում էր, մի գուցէ իրանց հալածողները լուին, բոլորովին խորասուզվում էր ջրի մէջ. որ իրան չտեսնեն, թէ և գիտէր, որ անօգուտ է արածը. այժմ իրան ևս տիրեց վհատիչ յուսահատութիւն: Եւ ահա, գուցէ առաջին անգամ իւր կենաց մէջ, մտաքերեց, որ ծովը խոր է և եթէ իրան չը յաջողի ափին հասնել, կարող է ինքը զինքը խեղել: Այդ միտքը թուլացրեց նորա ջղերը և ծովի յատակը սկսեց կարծես մի մոգական ձգողութիւն ազգել իւր վերաբ. Բայց յանկարծ, նորից լետ նայելով, խոր շունչ առաւ ու ըսկըսեց կրկնապատիկ ուժով յառաջ լողալ, որովհետեւ նկատեց, որ նաւակների ծալրերը դէպի հարաւ էին ուղղած, մինչզեռ իրանք հոսանքի հետ դէպի ափի հիւսիսային կողմն էին տարվում, այնպէս որ պարզ երեսում էր, որ լուսաբացի մասախուզով պաշտպանուած, իրանք դեռ ծածկուած էին հալածիչների աչքերից:

Այդ գիտմունքը Սլերատին ևս քաջալերեց նորից, որ գարձեալ ծովն ընկաւ, և վերջապէս հասան ափը, և ոտք կոխեցին հողի վերայ միայն քանի մի ըոսէ յոռաջ, քան մա-

կոյկները մօտ հազար քայլ իրանցից հեռու ցամաք հասան:

Է.

Որ կողմը պիտի երթային փախատականները, չգիտէին, որովհետեւ Անգլիայիք երկիւղ կրելով վայրենիների յարձակումից, կրակ չէին վառել, և չէին ցոլց տալիս ոչ մի նշան, որ կտրող էր իրանց ներկայութիւնը, կամ բանակատեղին դաւաճանել: Այս պարագայում նոցա համար ամենից ձեռնտու միջոցն էր աշխատել որքան հնար է շուտ և հեռու փախչել այնտեղից, ուր խուրակիի որդիքը ցամաք էին մտած: Ուստի զարձան գէպի աջ, և շուտով տառանց տեսնուելու իրանց հալածիչներից, անհետացան թաւ անտառի մէջ:

Սակայն շատ չանցաւ, և ահա բարձրաձայն աղմուկ, զէնքերի շառաչիւն և հրացանների ճալթմունք զարկան իրանց ականջին: Եմաէն բռնելով մի ծառի ստորին ճիւղերից սկիւռի ճարպիկութեամբ ելաւ մինչեւ ծայրը, բայց հազիւ մի ըոսէ անցած, նոյն արագութեամբ վայր իջաւ:

«Պիտի փախչենք» կանչեց նա, «բայց այս

կողմը ազատուելու, յուս չը կայ, մենք չենք
կարող հայրենակիցներիդ հասնել, առանց մեր
զօրականների խմբերը ճեղքելու: Նոքա ար-
դէն զարկուել են միմեանց և կուիւն սկսել է:
Յուսանք, որ կռուով տաքացած մեզ մոռա-
նան և քանի նոքա մարտնչում են, մենք
չպիտի ժամանակ կորցնենք»:

Նա խլեց Ալբերտի ձեռքը և քարշեց նո-
րան անտառի խորքը, մտնելով ամենախիտ
տեղերը, ուր արեւի ճառագալթները դժուա-
րութեամբ թափանցելով երկրայելի լուսա-
ստուեր են սփռում, երեմն ձեռք ու ոտքի
վերայ սողալով, դժուարութեամբ խճճուած
մացաների միջով դալարուելով, ճիւղերը ըզ-
գուշութեամբ հերձելով, որպէս զի ճկուած
ոստիկները իրանց չը դաւաճանեն:

Յանկարծ էմաէն կանգ առաւ ու մնաց
անշարժ և մատը բերնին դնելով սկսեց լա-
րուած ականջ գնել:

«Լուռ» շնչաց նա, չես լսում»:

«Ոչ», պատասխանեց Ալբերտը, ես ոչինչ
չեմ լսում:

«Կամաց, մեզ հալածում են»:

«Եւ ով կարող էր մեր հետքը դատնել»
հարցրեց Ալբերտը:

«Վայրի դաւակները» պատասխանեց է-

մաէն, «օձի ակտնջ ունին ու արծուի աչք:
Գնանք, մեզ հալածում են»:

Նորից խլեց նորա ձեռքը ու սկսեցին
սաստիկ արագ վազել մինչև որ հասան մի
անդունդի բերան, որոյ գրեթէ ուղղահայեաց
ապառաժեալ կողերի մէջ տեղը, անդնդի յա-
տակում, մի կատաղի, սրնթաց հեղեղ էր
փրփրում:

«Մեր հետքը դտնուած է արդէն» ասաց
նա, «որքան արագ վախչենք, ախնքան աւելի
խիստ են հալածում մեզ: Բայց մեզ հալածո-
ղը մէկ հատիկ մարդ է»:

Նոքա շուտով դտան մի շաւիդ, որ ապա-
ռաժի վերայ օձապտուտ վայր էր տանում և
իջան մինչև գետակը, որի վերայ մի ծառի
բուն ձգուած էր, երկուսն ի միտակն այդ վը-
տանգաւոր կածուրջը անցնելուց յետով, բոլոր
ուժերը լարելով, թաւալեցին ծառը հեղեղի
մէջ, որ քշեց տարաւ իւր յորձանուտ ալիք-
ների մէջ:

Յետոյ այծեամի թեթևութեամբ, անգ-
լիացին հետն առած, մագլցեց էմաէն դիմա-
ցի ժայռը, որ ցից կանգնած էր հեղեղատի վե-
րայ: Բայց ժայռի գլուխը հասած չը հասած,
նոքա լսեցին մի ձայն, որ իւր անունն էր

կանչում։ Անմիջապէս զլուխը գարձնելով, տեսաւ գիմացը քարափի վերայ Կաի-Կումուն։

«Եմաէ» կանչեց սա, «ուր ես փախչում, ինչու ես հետեւում այն օտարականին, մոռացար որ ես քեզ հարսանեաց ընծաներ ըերի։ Դարձիր քո հայրենական պան, քոյններիդ խրճիթը։

«Գնա, Կաի-Կումուն» պատասխանեց Եմաէն։ «Պարձիր այնտեղ, որտեղից եկած ես։ Իմ բաղդը վճռուած է, ես երբէք չեմ վերագտանայ։ Իմ պան ալսուհետեւ այս օտարի տունը պիտի լինի և իւր ընտանիքը իմ ընտանիքու։

«Բայց միթէ չգիտես, Եմաէ, որ եթէ դու լերան եղջերուի նման անտառներով ես փախչում, Կաի-Կումուն սարերի հողմի արագութեամբ է արշաւում։ Զգիտես որ ինձնից չես կարող պրճնել։

«Գիտեմ» ասաց աղջիկը «և այդ պատճառաւ տեսնում ես, որ չեմ փախչում։ Բայց Կաի-Կումուն, գարձիր այնտեղ, ուստի եկած ես։»

«Ո՛չ, Եմաէ», ասաց նա դառն ժպիտով։

«Բայց քեզ ասում եմ, քսան քալ եթէ անեմ քեզ և քո թշուառ յափշտակողին հասած կլինեմ։»

«Իսկ ես քեզ ասում եմ» յարեց աղջիկը գալով անգունդի քերանը «եթէ մի քալ ա-

ռաջ գաս, ես կընկնեմ հեղեղի մէջ և դու ալդտեղից կարող ես դիակս հանել։»

Մի ըսպէ վայրենին ապշեցաւ մնաց, որովհետեւ տեսնում էր, որ այդ խօսքերը լոկ ըսպառնալիք չէին։

«Եմաէ», կանչեց նո աղէկտուր ձայնով, ուրեմն դու թողնում ես նրանց, որ քեզ խընամքով մեծացրին, ուրանում ես քո Ատուասի հաւատը, եղբայրներիգ սէրը, և փախչում ես նրանցից, որոնց համար ժպիտդ արևի ճառագայթ էր, խռովալոյզ ճակատդ ձմբան մառախուղ։ Ոյն պան, ուր դու իշխում էիր, պիտի սգայ քեզ համար, անտառները, ուր դու ազատ, ուրախ թափառում էիր, երեկոյեան զեփիւռը, առուակները, որոց մէջ դու լուզում էիր կարապի նման քեզ պիտի խնդրեն։ Դու այդ օտարականի լետեկից իւր խուլ քաղաքը պիտի երթաս, ուր ազտառւթիւնը հալածուած է ու սրտերն ապականուած, ուր Պակեկան քեզ պիտի ծաղրէ, քեզ իբրև վայրենի, Ռանգատիրի զաւակ, պիտի ատէ։ Ե՛կ, Եմաէ, գարձիր ինձ հետ ալնտեղ, ուր քո հօր լիշտատկը ու քո մօր Ֆայդուան (Հոգին) հովանաւոր են քեզ։»

«Դու գիտես իմ վճիռը, Կաի-Կումուն.

թիւնը, որ դու ինձնից խլեցիր և այժմ տես
թէ ուր եմ գնում»:

Ալդ խօսքերը բերնին ցատկեց նա տպա-
ռաժն ի վայր և հարիւր ոտ բարձրութիւնից
խորտակուեցաւ հեղեղի մէջ, որոյ փրփրադէզ
կատաղի ալիքները առին տարան ծովը նորա
դիակը:

«Ո՞չ անէծք իմ վերաս», աղաղակեց է-
մաէն. ձեռքերը դէպի երկինք կարկառած,
կաի-կումուն՝ քաշերի քաջն էր, երիտասարդ-
գինուորները նրան նախանձում, իմ ցեղի աղ-
ջկերքը սիրում էին նրան: Անիծեալ լինիմ ես,
որ եղբարցս մտերմութեանը դաւաճանեցի:
Ալդ բոլորը քեզ համար սիրուն չնաշխարհիկ-
ինձ համար այլ ևս վերադարձ չկայ:

Երկուան էլ շարունակեցին ճանապարհը:

Ալբերտը սաստիկ լուզմունքից գողում էր.
մի խօսք արտասանելու կարողութիւն չունէր:
Էմաէի գէմքը հոգեկան խոր վիշտ էր արտա-
յալտում. նա գնում էր գլուխը կրծքին կա-
խած, ասես թէ խզի խայթի ծանը բեռան-
տակ ճնշուած: Բայց քանի լառաջ էին գնում,
քանի հեռանում էին վալրենիներից, այնքան
թեթևանում էր նոցա համար վտանգը: Ան-
տառը սկսաւ ցանցառանալ. շըջակալքն աւելի
գրաւիչ կերպարանք առին, և կաի-կումուի

քո խօսքերը չը պիտի փոխեն այն, մի շռայ-
լիր գուր տեղը»:

«Ուրեմն այդ քո անդառնալի վճիռն է»
հարցը կալի-կումուն խղզուած ձայնով, դու
մեզնից հեռանում ես, էմաէ, դու մեր ու-
րախութիւնը, մեր պարծանքը, դու մի օտա-
րականի համար մեզ թողնում գնում ես»:

«Ալդ իմ հաստատ վճիռն է» պատաս-
խանեց էմաէն:

«Եւ միթէ ոչինչ կարող չէ քո գութը
շարժել այն փոխելու»:

«Ոչինչ» ասաց էմաէ. «Եթէ կուզես կա-
րող ես գալ ինձ տանել, բայց ես մեռած մի-
այն պիտի ձեռքեղ ընկնեմ: Եթէ ոչ, դարձիր,
դէպի Խուրակիի որդիքը և տար նրանց վեր-
ջին ողջոյնս»:

«Ո՛չ» պատասխանեց կաի-կումուն, գլու-
խը տարօրինակ կերպով ցնցելով. «Ես քեզ չեմ
տանի ոչ մեռած ոչ կենդանի և ոչ Խուրա-
կիի որդւոց լետ կը դառնամ. դու կեանքիս
ուրախութիւնը փչեցիր հանգցրիր, այժմ հե-
ռանում ես և թողնում ես ինձ աշխարհի մէջ
միայնակ, դու ինձ թողնում ես ինչպէս հո-
գին թռչելով թողնում է մարմինը, ես քեզ
համար մաղթում եմ այն բոլոր երջանկու-

մահուան տպաւորութիւնը սկսաւ անհետա-
նալ գոնէ և որդ բոբլէի սրտում:

¶

Մի ամբողջ օր լժափառելուց յետոյ հա-
սան նոքա մշակուած հողերի, որք ցոյց էին
տալիս գաղթականների քաղաքակրթութեան
հետքերը: Շուտով տեսան նաև անդիմացի մը-
շակներ գաշտերում ցրուած և այդ տեսարա-
նի վերայ զգաց Ալբերտը, որ իւր սիրտը ա-
ւելի թունդ է զարկում, զաղանցուկ լիշա-
տակներ առատորէն լցուեցան իւր մտքի մէջ
և իւր կեանքի խորտակուած շղթայի ծայրե-
րը նորից կռեցին:

Ալերջապէս հասան Կօրօրայկա և նա ան-
պատմելի ուրախութեամբ նկատեց «Ամֆիտ-
րիտ» որ մի թեթև բուրգի նման օրօրվում
էր ծռվածոցի ջրերում: Դարձեալ քանի մի բո-
պէ, և աչա նա իւր բարեկամների մէջ տեղն
էր, որոց նա զիրկը ընկաւ հրճուանօք: Նը-
րանց հետ միասին գնալով հիւրանոց, շամ-
պանեալ զինու և գարեջրի բաժակները գա-
տարկեցին, որոնցից նա մի ամսի չափ ակա-
մայ հրաժարուած էր, պատմում էր նա զա-

նազան հրաշքներ իւր արկածքներից ու քա-
ջագործութիւններից այլ և այն հնարագիւտ
եղանակը, որով կարողացել էր իւր փախուս-
տը գլուխ բերել, ի հարկէ, ինչպէս ասում
են վիպասան մատենագիրները ճշմարտութիւ-
նը քաղցրանուագ բառերով զարդարելով:

«Ամֆիտրիտ» վերայ Ալբերտը ամեն բան
անփոփոխ գտաւ, միայն իւր բարեկամ Պուլ-
րօսը, որ իւր քսան տարուց ի վեր սպասած
զինուորական աստիճանի մէջ յառաջ գնալու
լոլուից բոլորովին ձեռք էր քաշել, իւր հին
նպատակն էր գլուխ բերել, ալսինքն կղզու
վերայ մի կտոր հող առել, սպասելով նոր մի
քսան տարի անցնելուց յետոյ, ցանկացած հա-
րստութիւնը ձեռք բերել: «Ամֆիտրիտ» ե-
կած էր Կօրօրայկայի ծոցը Ալբերտի գալուն
նախընթաց երեկոյին, իւր վաղեմի սպալին
այդտեղ ցամաք հանելու, որովհետև սորս նոր
կալուածները այդ գիւղի մօտակալքումն էին:

Ալբերտն իւր բարեկամ Պուլրօայից շատ
ախորժելի լուրեր առաւ նոր-Պլիմութի բը-
նակաց մասին:

Զօրքը չուելուց յետոյ օրիորդ Կվինտեր-
ըիլը, որ առաջ ընդհանրապէս աշխորժ և ու-
րախ էր, վերջին ծայր մտատանջ ու մելա-
մաղձոտ էր գարձել, մինչդեռ նաւապետ Ֆրա-

զերի մելամաղձն ու տրտմութիւնը զուարձութեան ու ուրախութեան էր փոխուել: Երբ քանի մի օրից զօրքերը յաղթանակով, բայց առանց Սլքերտի վերադարձն, Ելիզաբէթը հրապարակաւ լաց եղաւ և քիչ մնաց, որ սպազգեստ հագնէր, մինչդեռ նաւապետ Ֆրազէրի տրամադրութիւնը երբէք այնքան լաւ չէր եղած և մի շաբաթից յետոյ առօք փառօք առաջարկեց իւր ձեռքը օրիորդ Ելիզաբէթին, «Ի օրիորդն իւր կողմից առօք փառօք մերժեց:

Երկու օր յետոյ լուր հասաւ, որ գնդապետ Կվինտերիի եղբարը մեռել է Հնդկաստանում թողնելով իւր եղբօր աղջկանը իբրև ժառանգութիւն երկու միլիոն. բայց այդ լուրը ամեննեին չսփոփեց օրիորդ Ելիզաբէթին:

Վերջապէս երբ լուր տարածուեցաւ, թէ Սլքերտը կենդանի է և պիտի վերադառնայ, Ելիզաբէթի ուրախութիւնը նոյնքան մեծ եղաւ, որքան նաւապետ Ֆրազէրի տհաճութիւնը:

«Ոլոր այդ լուրերը վերին աստիճանի ճշշմարիտ էին և միայն աճեցնում էին Բօբլէի անհամբերութիւնը օր առաջ Նոր-Պլիմութհաօնել:

«Բայց ես տեսայ», ասաց Պուլոպը, «որ

դու մի վայրենի աղջիկ ունիս հետդ: Ես կարծեմ քո նպատակը չէ Ելիսաբէթին մի ամբողջ հարեմով ներկայանալ: Բազմակնութիւնը թերեւս թոյլ տուած լինի վայրենիների մէջ, բայց գոնէ Նոր-Պլիմութում ընդունուած չէ և ես չեմ կարծում, որ օրիորդ Ելիզաբէթը քո սիրուդ համար օրէնքի խստութիւնը խախտէ»:

«Թշուառ աղջիկ, նա չի կարող դէպի իւրացինքը վերադառնալ, ասաց Բօբլէ նկատելի շփոթութեամբ. նոքա իրան պիտի պատառեն, ուտեն, եթէ երբ և իցէ ձեռք ձգեն»:

«Ա՛հ այդ վայրենիները» կանչեց Պուլրօպ: «Ե՛հ, այս անգամ ես քեզ կ'օգնեմ, Բօբլէ: Իմ գաղթատեղում աշխատող կանանց պէտք ունիմ: Վաճառիր ինձ այդ վայրենուհին»:

«Ալդ Բնչ առաջարկութիւն է, որ անում ես»:

«Ե՛հ, ես քեզ առաջարկում եմ շատ պարզ կերպիւ, վաճառել ինձ այդիկը. և խոստանում եմ քեզ չուտել նորան: Դուցէ մտադիր ես նրան օրիորդ Ելիզաբէթին ընծայել, տուած խոստմունքդ կատարելու համար:

«Դեռ հարց է, թէ ինքը կը համաձայնի այստեղ մնալ, ասաց Սլքերտը կակագելով:

«Ինքը կհամաձայնի. այդ է եղել միակ գժուարութիւնը: Քեզ ասում եմ վաճառիք ինձ»:

«Ելիզաբեթը» յարեց Բօբլէ «Ժառանգում է երկու միլիոն: Ես քեզ այդ վայրենուհին ոչ թէ վաճառում, այլ ընծալում եմ, Պուլրօպ»:

Երեկոյեան «Ամֆիտրիտը» խարիսխը հանց: Ալբերտը նախ և առաջ մի զբօսանք արաւ, յետոյ ելաւ նաւը, որ առագաստները պարզելով նոր՝ Պլիմութ ուղղեց իւր ընթացքը: Այդտեղ Լորդ Բօբլէի վերադարձը իբրև հասարակաց հանդէս տօնեցին և մանաւանդ գնդապետի տանը ի պատիւ նորա մեծ խընճուք եղաւ: Քանի մի օր յետոյ խնդրեց նա Ելիզաբեթի ձեռքը և իւր առաջարկութիւնը սիրով ընդունուեցաւ: Հարսանիքը նշանակուեցաւ լաջորդ կիւրակէ օրը, երբ նորին արժանապատութիւն տէր Ոինգվիլ, որ պիտի պսակը կատարէր, քարոզական մի ճանապարհորդութիւնից պիտի վերադառնար: Այդ օրը ամբողջ նոր՝ Պլիմութ քաղաքը յուղուած էր: Ամեն մարդ խօսում և իւր ձեռով իւր հաւանութիւնն էր յայտնում այն միութեան, որ պիտի կատարուէր ազնուատոհմ լորդի և գեղեցիկ ու հարուստ ժառանգուհու մէջ: Բայց

մանաւանդ մի բնիկ աղջիկ կար, մի վաճառական նաւի վերալ հենց այն օրը եկած, որ իւր թափանձագին հարց ու փորձով աչքի էր ընկնում: Նա անդադար խնդրում էր, որ իւրեն ցուց տան այն տունը, ուր հարսանիքը պիտի տօնուի:

Երեկոյեան դէմ նոր՝ Պլիմութի բոլոր բարձր հասարակութիւնը, «Ամֆիտրիտի» սպաները, պսակելի զուգի հետ իմիասին ժողովուած էին գնդապետի դահլիճում: Դահլիճը ստորին լարկումն էր և մեծ կրկնաթև դուռն բացվում էր պարտիզի վերայ. այնտեղ սպասում էին գերապատիւ տէր Ոինգվիլի դալստեան:

Ցանկարծ դուռը ներս բացուեցաւ և մի այլանդակ, յուզուած դէմքով ներս պրծաւ քահանան:

«Ես այդ պսակը չեմ օրհնի, կանչեց նա ցնորսուածի պէս. «Երկնքի անէծքը իշած է այդ միութեան վերայ»:

Հանդիսականները շփոթուած շըջապատեցին նրան և բացատրութիւն պահանջեցին իւր տարօրինակ խօսքերին:

«Ահա ձեզ բացատրութիւն» ասաց Դանիէլ Ոինգվիլ պարտէզ տանող դուռը լայն բանալով:

Մի սոսկալի, սրտամմլիկ տեսաբան հանդիսացաւ նայողների աչքերին: Մի մատաղ վարենի աղջիկ, գերազանց գեղեցկութեամբ, խեղուած կախուած էր մի կալղենու ճիւղից, որ շուաք էր ձգում դրան վերայ:

«Ալդ Բնչ է նշանակում» կանչեց գնդապետ Կվինտերի, մինչդեռ լորդը, մոմի նման գունատ մի սեղանի կրթնեցաւ, որ վարդ չընկնի:

«Ալդ նշանակում է» պատասխանեց քահանան, որ ալդ մատաղահաս աղջիկը, որին ես երբեմն աւետարանի ճշմարտութիւնը ուսուցել էի անմիւ վտանգների միջով ինձի եղած էր ահա՝ այն մարդու համար օգնութիւն խնդրելու, և նա մատնացոյց արաւ լորդ Բոբլէին: Ալդ նշանակում է, որ այն աղջիկը թողել է սորա համար իւր հայրենիքը, ազգականները, իւր ազգը, ուր ինքը առաջնոց առաջինն էր: Նա իւրայնոց դարանը անդիւցոց մատնեց և շատ անգամ քաջարար ճակատը մահուան դէմ առաւ, սորան փրկելու համար: Ալդ այն է նշանակում, որ այն մարդը նորան պաշտպանութիւն և սէր է երդուել խոստացել է իրեն ամուսին ու կենակից անել, և ալդ ամենի փոխարէն վաճառել է նորան իբրև գերի:

Կօրօրայկալ վերադառնալով, ես գտայ

նորան անմխիթար լալիս, ստոր աշխատանքով զբաղուած: Իւր զոհաբեր նուիրման փոխարէն, ցեղապետի աղջիկը սև ապերախտութեան է արժանացել: Յուսահատ մի ըոպէում, ողորմելին փախել եկել է ալստեղ և կախուել է այն դահլիճի պատուհանների առաջ, ուր լորդ Բոբլէն պատրաստվում է իւր հարսանիքը տօնել»:

Քահանալի այս խօսքերը լսելով, օրիորդ Ելիզաբեթը ուշամասի եղաւ և հանգիսականները բարձրածայն զզուանքով ցրուեցան:

Միւս առաւաօտը լորդ Բոբլէն գնդապետ Կվինտերիլից մի նամակ ստացաւ, որով մէջ վերջինս ցուրտ և համառօտ խօսքերով յայտնուամ էր թէ, ինդրում է, այսուհետեւ իւր ալյելութիւնը դէպի իւր տունը դադարեցնե, իսկ «Ամֆիտրիտի» սպաները յայտնեցին, թէ ալլես չեն ուզում լորդի հետ ծառայել:

Վեց ամսից յետոյ օրիսրդ Ելիզաբեթը պսակուեցաւ ազնիւ նաւապետ Ֆրազերի հետ:

Լորդ Բոբլէի մասին այլ ևս ոչինչ չը լսուեցաւ, միայն քանի մի տարի ետքը այն մեռեալների ցուցակում, որք ընկել էին Հնդկաստանի ապստամբութեան կոռուի մէջ, գտան նաև Սլքերտ Բոբլէի անունը:





309

Գի՞նն է 25 ԿՈՊԵԿ

Վաճառւում է Կենդրոնական գրավաճառա-
նոցում:

2013

